ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ «ԱԶԴԱՐԱՐ» ԱՄՍԱԳՐԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՄԱՆ 200 ԵՎ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՇՄԱՎՈՆՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ 170-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՔՐԻՍՏՈՍԱԻԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻՆ, ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, **Տ. ԹՈՐԳՈՄԱՅ** ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, **Տ. ԳԱՐԵԳԻՆ** ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՅՈՑ ԿՈՍՏԱՆԴՆԱՊՈԼՍՈՅ, ՀԱՄՕՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ԵՒ ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Աստուծոյ ողորմութեամբ մեր Մայր դաստիարակ Եկեղեցին ահա շուրջ հազար և եօթ հարիւր տարիներից ի վեր իր հոգևոր ու ազգային առաքելութիւնը շարունակում է մեր հաւատացեալ ժողովուրդի ծոցում, ի՛ Հայաստան և ի՛ ափիւռ աշխարհի, վայելելով բարոյական և նիւթական օժանդակութիւնը մեր ազգի հաւատացեալ զաւակների:

Վերջին երկու դարերի հայ մամուլի պատմութեան գործունէութեան անդաստանում, որպէս ռահվիրայ, մեր ազգային Եկեղեցու համեստ, սակայն իմաստուն և հեռատես մի քահանայ, որ ծնուած էր 1750 թ. Պարսկաստանի Շիրազ քաղաքում, **Տ. Յարութիւն Շմաւոնեան** անունով, 1794 թ. հեռաւոր Հնդկաստանի Մադրաս հայաբնակ քաղաքում, հրատարակեց «ԱԶԴԱՐԱՐ» անունով մի ամսագիր, որ լոյս է տեսել ընդամենը 18 համար, սակայն այն հանդիսացել է նախակարապետը հետագայում աճած, զարգացած և հազարապատիկ բազմապատկուած հայ թերթերի: Փաստօրէն

«ԱԶԴԱՐԱՐ»ը հանդիսացել է հայ մամուլի հիմնադիրն ու առաջամարտիկը:

Ազգապահպանութեան նուիրական գործի համար գլխաւոր կռուանները հանդիսանում են մեր Մայր Եկեղեցին, ազգային մշակոյթը, կրթական հաստատութիւնները, ինչպէս նաև հայ մամուլը:

Հայ թերթը հանապազօրեայ հացի նման խիստ անհրաժեշտ է մեր ազգակիցների համար: Պատմական, գիտական և գրական արժէքաւոր յօդուածներից բացի, հայ մամուլը խիստ անհրաժեշտ է աշխարհասփյուռ հայութեանը միաւորելու և կապ պահպանելու Մայր Հայրենիքի հետ: Մեր օրերին առաւել ևս անսահման մեծ է հայ մամուլի առաքելութիւնը հայութեան ծոցում:

Երջանկայիշատակ Տ. Յարութիւն աւագ քահանան հանդիսացել է առաջին երախտաւորը:

«ԱԶԴԱՐԱՐ»ի լոյս ընծայման 200-ամեակի և մեծանուն հեղինակի վախճանման 170-ամեակի առթիւ, ընդառաջելով անկախ մեր Հայաստանի Հանրապետութեան մշակոյթի նախարար մեծայարգ **Տիար Յակոբ Մովսէսի** միջնորդութեան, երախտապարտ սրտով պանծացնում ենք նախաշաւիղ ամսագրի 200-ամեայ տարեդարձը և օրհնում երանաշնորհ Տ. Յարութիւն աւագ քահանայ Շմաւոնեանի պայծառ յիշատակը:

«Լցէք զխնդութիւնս իմ. զնոյն խորհիջիք, զնոյն սէր յանձին ունիջիք, համաշունչք, միախորհուրդք» (Փիլիպ. Բ. 2):

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 21 Փետրուարի
1994 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԽԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 2027